ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1959 Общественные науки

Հ. Ա. Գևորգյան

ԴԻԱԼԵԿՏԻԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Երևույթների փոխադարձորեն կապակցված ամբողջության զարգացումը և այդ զարգացման ամենաընդհանուր օրինաչափությունները (հակադրությունների միասնությունն ու պայքարը, քանակական փոփոխությունների անցումը որակական փոփոխությունների, զարգացումը հակասության միջոցով կամ բացասման բացասումը) ներհատուկ են օբյեկտիվ աշխարհին, բայց դրանց հայտնագործումը, ըմբռնումը և գիտակցված կիրառումը գիտական հետազոտության մեջ, այսինքն՝ դիալեկտիկայի մասին ուսմունքի ստեղծումը պատմական երևույթ է։

Բնագիտության կողմից օբյեկտիվ աշխարհի դիալեկտիկայի դրսևորումների հայտնաբերումը նախապատրաստվել է նրա մի քանի դարերի զարգացմամբ, ընդ որում այդ զարգացման առաջին փուլին հատուկ էր դիալեկտիկայի հակադրությունը կազմող մետաֆիզիկական մոտեցումը աշխարհի նկատմամբ բնության հավերժորեն շարժվող ու կենդանի մարմնի մասնատումը, «վիրահատումը» և այսպիսով երևույթների քննումը իրարից անջատ, անշարժության մեջ։ Բնության նկատմամբ այսպիսի մոտեցումը կարող էր գոյություն ունենալ և գոյություն ունեցավ այնքան ժամանակ, մինչև որ այդ եղանակով բնագիտության ձեռք բերած արդյունքներն իրենք սկսեցին հակասել այդ մոտեցմանը, այդ եղանակին։ Բնագիտության զարգացման այս հակասականությունը պատմականորեն անհրաժեշտ և տրամաբանական է, քանի որ մարդկային ճանաչող միտքը, աշխարհի՝ որպես զարգացող ամբողջության մասին գիտական պատկերացում կազմելուց առաջ, պետք է հարստանար բազմաթիվ փաստերի գումարով, բավականաչափ գիտելիքներ կուտակեր առանձին երևույթների մասին։

Այդպիսի գիտելիքների կուտակմանը զուգընթաց բնագիտության մեջ աստիճանաբար թափանցում էր երևույթների փոխադարձ կապի և զարգացման գաղափարը. ավելի ճիշտ՝ բնագիտության զարգացումն ինքնին անխուսափելիորեն տանում էր դեպի այդ գաղափարի ձևակերպումը՝ բնության մեջ օբյեկտիվորեն իշխող դիալեկտիկայի աստիճանական հայտնագործումը. իսկ մյուս կողմից էլ բնագետների առջև ավելի ու ավելի հրամայաբար էր ծառանում աշխարհի երևույթներին դիալեկտիկորեն մոտենալու անհրաժեշտությունը։ Բայց այդ հայտնագործություններից և այդ անհրաժեշտությունից մինչև դիալեկտիկայի գիտակցված կիրառումը դեռ շատ հեռու էր։ Նույնիսկ այդ բանից հետո, երբ արվեցին բնագիտության երեք խոշորագույն հայտնագործությունները՝ երբ կատարվեց բջջի հայտնագործումը, որի շնորհիվ պարզվեց օրգանական ամբողջ աշխարհի միասնությունը, ձևակերպվեց էներգիայի պահպանման և փոխակերպման օրենքը, որի մեջ արտահայտություն գտան մատերիա-

յի և շարժման հավիտենականությունը և հարատև շրջապտույտը, հանդես եկավ Դարվինի ուսմունքը, որը երևույթների կապակցության, զարգացման և փոխակերպման նույն գաղափարի հաստատումն էր կենդանի օրգանիզմների աշխարհի նկատմամբ,—նույնիսկ այս հայտնագործություններից հետո էլ բնագետները պատմական անխուսափելիությամբ չանցան դիալեկտիկայի գիտակցված կիրառման։

Իսկ ինչո՞ւ։ Նախ այն պատճառով, որ այդ հայտնագործությունները, իրենց բնույթով լինելով դիալեկտիկական և այս իմաստով խոշոր շրջադարձ նշանավորելով բնագիտության ու նրա աշխարհայացքային հիմքերի զարգացման ասպարեզում, այնուամենայնիվ բացահայտում էին օբյեկտիվ աշխարհի դիալեկտիկայի ոչ ամբողջ էությունը, ոչ ամբողջ հարստությունը, այլ, գլխավորապես, հաստատում էին աշխարհի միասնությունը, փոխադարձ կապակցությունն ու երևույթների փոխակերպումը։ Սրանից, այնուհետև, բխում է, որ այդ հայտնագործությունները լրիվ չէին խորտակում նախկին, գլխավորապես Նյուտոնյան, հայացքը աշխարհի նկատմամբ, այնպիսի հեղափոխություն չէին բնագիտության մեջ, որը պահանջեր լրիվ հրաժարվել մեխանիստական և մետաֆիզիկական մեթոդոլոգիայից, հասցներ մետաֆիզիկական մտածելակերպին հակադիր իմացաբանական հետևություններ։ Այս կապակցությամբ արժե հիշատակել Լենինի կողմից դիալեկտիկայի սահմանումը որպես «ուսմունք զարգացման մասին՝ իր առավել լրիվ, խորը և միակողմանիությունից ազատ ձևի մեջ, ուսմունք մարդկային գիտելիքի հարաբերականության մասին, գիտելիք, որը մեզ տալիս է հավիտենասյես զարգացող մատերիայի արտացոլումը»[1]։ Բնագիտական երեք մեծ հայտնագործությունները ամբողջ սրությամբ ամենևին էլ չդրեցին մեր գիտելիքների հարաբերականության իմացաբանական հարցը։

Ահա թե ինչու բնագետներն այդ ժամանակ չանցան դիալեկտիկայի գիտակցված կիրառման։ Ավելին, բնագիտական մեծ հայտնագործությունները, հաստատելով մատերիալիզմը և աշխարհի փոխադարձաբար կապակցված ամբողջության գաղափարը, միաժամանակ բնագիտության հետագա զարգացման մեջ գտան մեխանիստական մեկնաբանություն և նույնիսկ հաջողությունների հասան հենց այդպիսի մեկնաբանությամբ. խոսքը առաջին հերթին մատերիայի կինետիկ տեսության և ստատիստիկ մեխանիկայի մասին է։ «Էներգիայի պահպանման և փոխակերպման օրենքի հայտնագործումը թույլ տվեց էներգիայի բոլոր ձևերը քանակապես գնահատել մեխանիկական միավորներով և դրանով իսկ, բնականաբար, այն միտքն էր ծնում, որ հնարավոր է բնության բոլոր երևույթների հանգեցումը մեխանիկական երևույթների», նշում է ֆիզիկայի պատմաբան Կուդրյավցևը և բերում է XIX դարի խոշոր ֆիզիկոս Բոլցմանի այն խոսքերը, թե «մեր դարը կկոչվի մեխանիկական աշխարհըմբռնողության դար, Դարվինի դար»[2]։

Բայց դրա հետ միասին անցյալ դարի 70-ական թվականներից հետո բնագիտության մեջ սկսեցին հասունանալ ապագա հեղափոխիչ իրադարձությունների նախադրյալները։ Էքսպերիմենտալ բնագիտությանը զուգընթաց սկսեց բուռն կերպով զարգանալ տեսական բնագիտությունը, որը, ի տարբերություն մինչև XIX դարի կեսերը գերազանցապես իշխող Նյուտոնյան հայեցա-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, էջ 5։

[2] П. С. Кудрявцев. История физики, том II, Учпедгиз, М., 1956, стр. 99.

կեսի, ձգտում էր ընդհանրացնել էքսպերիմենտալ բնագիտության հաջողությունները, ավելի ու ավելի հաճախ և համարձակորեն էր դիմում բնության այս կամ այն բնագավառի և առհասարակ մատերիայի կառուցվածքի վերաբերյալ ընդհանրացնող հիպոթեզների կառուցման, որոնք նյուտոնյան (ֆենոմենալիստական) տեսակետից կարող էին մտահայեցողական թվալ։ Այդպիսի շրջադարձը դեպի տեսական մտածողությունը, պետք է ասել, ամենևին էլ փիլիսոփայության ծառայությունը չէր բնագիտության հանդեպ, այլ բխում էր բնագիտության ներքին զարգացման անհրաժեշտությունից։ Էքսպերիմենտալ բնագիտությունը առանց այդպիսի ընդհանրացումների այսուհետև կարող էր փակուղու առջև կանգնել։ Այսպես, նրա զարգացման համար էական նշանակություն ուներ էլեկտրական, մագնիսական, օպտիկական երևույթների բնույթի և ներքին մեխանիզմի վերաբերյալ հիպոթեզների ստեղծումը, որոնք թույլ տային պարզել, թե ի՞նչ կապ կա այդ տարբեր բնագավառների միջև, որով և հնարավորություն ստեղծվեր որոշակի ուղղություն տալու էքսպերիմենտալ հետազոտությանը։ Այս տեսակետից առանձնապես նշանակալի էին քիմիայի մեջ՝ Մենդելեևի գիտական հայտնագործությունը, ֆիզիկայում՝ էլեկտրամագնիսական երևույթների տեսության ստեղծումը։ Այս վերջինս փիլիսոփայական հատկապես մեծ նշանակություն ունեցավ, որովհետև նրա առնչությամբ բարձրացող՝ նյութի և դաշտի փոխհարաբերության հարցը անմիջական հետաքրքրություն էր ներկայացնում մատերիայի փիլիսոփայական հասկացության ըմբռնման համար և այս առումով թերևս առաջին խոշոր երևույթն էր, որը բնագետների առջև սուր կերպով դրեց հասկացությունների հարաբերականության իմացաբանական հարցը։ Եվ իրոք, եթե մինչ այդ մատերիան ըմբռնվում էր որպես նյութականություն, ապա էլեկտրամագնիսական, գրավիտացիոն դաշտը որպես նյութական միջավայր բացատրելու փորձերը տառապում էին ակնհայտ թերություններով։ Հարկ էր լինում ընդունել, որ նյութից (հին ըմբռնմամբ՝ մատերիայից) բացի գոյություն ունի ոչ-նյութական դաշտ։ Այդպիսով սասանվում էր մատերիայի՝ բնագետներին միակ հայտնի հասկացությունը։ Այնուհետև, եթե էներգիայի պահպանման և փոխակերպման օրենքի հայտնագործողները էներգիան չէին էլ պատկերացնում առանց մատերիայի, ապա հետագայում էլեկտրադինամիկայի զարգացման շնորհիվ ֆիզիկայի մեջ անհնար դարձավ մատերիայի սահմանումը առանց էներգիայի հատկություններին դիմելու։ Մատերիայի դերը հանգեցվեց էներգիայի սոսկ կրողի դերին։ Սկիզբ առավ և զարգացավ էներգետիզմը, որը վերջիվերջո մտացածին ֆիկցիա հայտարարեց մատերիայի հասկացությունը, իսկ միակ ռեալությունը՝ նյութականությունից զուրկ էներգիան։ Նյութականության ժխտումը բնականաբար հանգեցրեց այն մտքին, որ զգայությունները մեզ չեն տալիս օբյեկտիվ առարկայի պատկերը, լուսանկարը, քանի որ նրանք նյութականացնում են փորձի մեջ դրված առարկաներն ու երևույթները։ Մնում է սոսկ երևույթների նկարագրությունն այնպես, ինչպես դրանք տրված են զգայական փորձի մեջ, բայց ո՞չ այնպես ինչպես դրանք կարող են գոյություն ունենալ այդ զգայական փորձից անկախ։ Զգայական փորձից անկախ առարկաների ու երևույթների գոյության և այդ փորձի մեջ անմիջականորեն չտրված (մտքով հասանելի) էության հարցն իսկ հայտարարվում էր սպեկուլյատիվ սխոլաստիկա։

Թերևս կարիք չլիներ այդքան ծանրանալու էներգետիզմի վրա, եթե նրանից բխող փիլիսոփայական-իմացաբանական հետևությունները շատ բնորոշ չի-

նեին մեր և նախորդ դարերի սահմանագլխում իրենց զգացնել տվող ագնոստիկական և սուբյեկտիվ-իդեալիստական տենդենցների համար։ Սրան հակառակ, նույն ժամանակ հետագա զարգացում ստացավ ատոմիստական՝ մատերիալիստական ուղղությունը ֆիզիկայի մեջ, որը, հենվելով աշխարհի նյութականության և մատերիայի դիսկրետության կլասիկ պատկերացումների վրա, պաշտպանում էր այն տեսակետը, որ մեր զգայությունների և մտածողության օգնությամբ ձեռք բերված դիտելիքները օբյեկտիվ աշխարհի պատկերը, պատճենն են։ XIX դարի վերջում ֆիզիկայի հաջողությունները՝ էլեկտրամագնիսական երևույթների, ներատոմային պրոցեսների, հատկապես էլեկտրոնի հայտնաբերումը լուրջ փորձաքար եղան ոչ միայն ֆիզիկայի մեջ այն ուղղության համար, որը վերջիվերջո էներգետիզմին հանգեց, այլև ֆիզիկայի մատերիալիստական ուղղության համար։ Պարզ դարձավ, որ կլասիկ ֆիզիկայի (իսկ փիլիսոփայական առումով՝ մեխանիստական-մատերիալիստական) պատկերացումներով անհնար էր բավարար բացատրություն տալ նորահայտ երևույթներին։

Եթե մինչ այդ բնագետները խուսափում էին փիլիսոփայական հարցեր բննելուց, ապա նոր հայտնագործությունները, մասնավորապես կենսաբանության, քիմիայի և հատկապես ֆիզիկայի բնագավառում, էապես փոխեցին բնագիտության և փիլիսոփայության փոխհարաբերությունը. բնագետների համար կենսական անհրաժեշտություն դարձավ առանձնապես իմացաբանական հարցերի լուծումը։ Մատերիայի ընդհատության և անընդհատության հարցը, գրել է վերը հիշատակված՝ ֆիզիկայի խոշոր տեսաբան Բոլցմանը, «չի կարելի քննել առանց շոշափելու մի շարք այլ հարցեր, օրինակ՝ պատճառականության օրենքի էության, մատերիայի, ուժի և այլ հարցեր, որոնց մասին էլ հենց ասում էին, թե... դրանք ամբողջովին պետք է թողնել փիլիսոփայության տնօրինությանը։ Ներկայումս իրադրությունը փոխվել է, և բնախույզները առանձին սիրով են զբաղվում փիլիսոփայական հարցերի քննությամբ։ Եվ նրանք միանգամայն իրավացի են»[3]։

Այսպիսով, երկու դարերի սահմանագծում ֆիզիկայի զարգացումը բնագետների համար հրամայական անհրաժեշտություն դարձրեց նոր ձևով մտածելը, նոր մոտեցումը երևույթների բացատրությանը։ Այդ նոր մտածելակերպը, նոր մոտեցումը կարող էր լինել միայն դիալեկտիկան։

* *

Բայց նախքան բնագիտությունը իր իսկ ներքին զարգացմամբ կհանգեր երևույթներին գիտակցված ձևով դիալեկտիկորեն մոտենալու անհրաժեշտությանը, փիլիսոփայության մեջ արդեն ստեղծված էր ավարտուն ուսմունք դիալեկտիկայի մասին։

Արդեն նախորդ դարասկզբին գերմանական իդեալիստական կլասիկ փիլիսոփայությունը, հատկապես ի դեմս Հեգելի, մեծագույն զարգացման հասցրեց մտածողության պրոցեսի, ձևերի և օրենքների ուսումնասիրությունը, դրանով իսկ սպառելով այն ամբողջ արժեքավորը, որի զարգացումը հնարավոր էր իդեալիզմի սահմաններում։ «Մաքուր մտածողության» ոլորտում հայտնաբերելով հասկացությունների դիալեկտիկան, Հեգելը դրանց մեջ

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 123։

կռահեց օբյեկտիվ աշխարհի դիալեկտիկան ևս, ասում է Լենինը։ Դիալեկտիկայի մասին Հեգելի ուսմունքը, սակայն, որոշ բնագետների կողմից անբարյացակամորեն ընդունվեց, ուրիշների կողմից չըմբռնվեց և ընդհանուր առմամբ անծանոթ մնաց բնագիտությանը։ Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ բնագիտությունն այդ ժամանակ դեռևս պատրաստ չէր նրա ընկալմանը, այլև ուրիշ հանգամանքների բերումով։

Հեգելյան դիալեկտիկան իր վերացական-սպեկուլյատիվ բնույթով խորթ էր փորձնական հիմքի վրա զարգացող բնագիտությանը, որը, չմերժելով տեսական ընդհանրացումների խոշոր նշանակությունը, միաժամանակ խիստ բացասաբար էր վերաբերվում դեպի մտային տեսական բարդ կառուցումները, «մաքուր մտածողությունը», շատ վերացական հիպոթետիկ եզրակացությունները և նամանավանդ դրանց ծայրահեղ արտահայտությունը՝ սպեկուլյատիվ մտածելակերպը։

Ավելին, հեգելյան դիալեկտիկան խորթ էր ժամանակի բնագիտությանը նաև իր իդեալիստական մեկնակետի պատճառով, որն իր կնիքն էր դրել Հեգելի կողմից դիալեկտիկայի ըմբռնման և մեկնաբանության ամբողջ բնույթի վրա։ Եվ բնական է, որ համարյա ամբողջովին մատերիալիստական հիմքի վրա խարսխվող բնագիտության ներկայացուցիչները մտքի մարդանքներ էին համարում հեգելյան հանճարեղ մտքերը դիալեկտիկայի մասին, որոնք պարուրված էին իդեալիստական մշուշով։

Գաղափարական և սոցիալական այլ հիմունքների վրա նախորդ դարակեսին հանդես եկավ որակապես տարբեր, նոր ուսմունք դիալեկտիկայի մասին՝ Մարքսի և Էնգելսի ուսմունքը։ Մատերիալիզմի դիրքերից նրանք յուրացրին հեգելյան դիալեկտիկան, բայց այդ յուրացումը դիալեկտիկայի պարզապես ընկալումը չեղավ. մատերիալիստական հիմքը էականորեն անդրադարձավ դիալեկտիկայի ըմբռնման ու բնույթի վրա։ Մարքսը և Էնգելսը դիալեկտիկան գտան ոչ թե «մաքուր մտածողության» ոլորտում, այլ օբյեկտիվ իրականության զարգացման մեջ. հիմնավորեցին այն միտքը, որ սուբյեկտիվ դիալեկտիկան, մտածողության և իմացության պրոցեսի դիալեկտիկան օբյեկտիվ դիալեկտիկայի արտացոլումն է, այն միտքը, որ օբյեկտիվ աշխարհի ճշմարիտ արտացոլման համար անհրաժեշտ է մտածել դիալեկտիկորեն, որ մատերիալիզմը կարող է հետևողական լինել, եթե միայն ներթափանցված է դիալեկտիկայով։

Մարքսի և Էնգելսի այն դիտողությունը, որ բնագիտությունը վաղ թե ուշ պետք է ստիպված լինի իր հետազոտության մեջ անխուսափելիորեն անցնելու դիալեկտիկայի գիտակցված կիրառման, իր հաստատումը գտավ բնագիտության հետագա զարգացման ընթացքում։ Միաժամանակ Մարքսը և Էնգելսը գտնում էին, որ բնագիտության հետագա զարգացումը կպահանջի մատերիալիզմի ձևի փոփոխություն։ «Հետևաբար,— գրում է Լենինը.— Էնգելսի մատերիալիզմի «ձևի» ռևիզիան, նրա բնափիլիսոփայական դրույթների ռևիզիան ո՛չ միայն իր մեջ ոչինչ «ռևիզիոնիստական» բան չի պարունակում բառիս ընդունված իմաստով, այլ, ընդհակառակը, անհրաժեշտորեն պահանջվում է մարքսիզմի կողմից»[4]։ Սակայն, նախազգուշացնում է Լենինը, մատերիալիզմի ձևի փոփոխությունը չի նշանակում ընդհանրապես հրաժարումն մատերիա-

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 334։

լիզմի հիմնարար դրույթներից, այլ հանդիսանում է նրա հետագա զարգացում և կատարելագործում բնագիտության նոր նվաճումներին համապատասխան, ճիշտ այնպես, ինչպես որ պրոլետարիատի դիկտատուրայի մասին մարքսյան ուսմունքի կիրառումը պատմական նոր պայմաններում նշանակում է նրա զարգացում և կոնկրետացում այդ պայմաններին համապատասխան, և ոչ թե ռևիզիոնիստական այնպիսի հետևությունների բխեցում, որոնք ըստ էության վերացնում են պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարն իսկ։ Ուրեմն, մեր դարասկզբին մատերիալիզմի ձևի փոփոխությունը նշանակում էր նրա հիմնական, հաստատուն և այդ իմաստով անփոփոխ դրույթների հետագա կոնկրետացում, նշանակում էր բնագիտության նորագույն հայտնագործությունների շնորհիվ մատերիալիզմի այս կամ այն կողմի քննություն նոր լույսի տակ և դրանով իսկ նրա խորացում։ Այսպես, ասում է Լենինը, անհողդողդ է մնում Էնգելսի չափազանց էական այն դրույթը, որ «շարժումն աներևակայելի է առանց մատերիայի»։ Ֆիզիկայի և քիմիայի հայտնագործությունների շնորհիվ օբյեկտիվ աշխարհի մասին գիտելիքների զարգացումը, հատկապես մատերիայի գոյության տարբեր ձևերի՝ նյութի և դաշտի մասին ուսմունքի ստեղծումը ցույց տվեցին, որ Էնգելսի այդ դրույթը որպես ընդհանուր, միանգամայն ճիշտ լինելով, միաժամանակ պետք է հիմնավորվեր այդ կոնկրետ բնագավառի համար, որովհետև առանց այդպիսի հիմնավորման առաջին հայացքից հակասում էր նորահայտ փաստերին։ Իսկ այդ հիմնավորումը իր հերթին պահանջում էր դրույթի կոնկրետացում, մասնավորեցում, նրա բովանդակության հարստացում։ Եվ դա միայն տվյալ դրույթին չի վերաբերում։

Նորագույն հայտնագործությունների նկատմամբ մատերիալիզմի դրույթների կիրառումը, կոնկրետացումը սերտորեն կապված էր մեկ ուրիշ կարևոր մոմենտի հետ. այդ հայտնագործություններից անխուսափելիորեն բխում էին գնոսեոլոգիական հետևություններ, որոնք ֆիզիկոսներն իրենք շրջանցել ի վիճակի չէին[5]։

Հարցն այսպես էր դրված. բնագիտության նորագույն հայտնագործություններից բխում էին փիլիսոփայական հետևություններ, որոնց մատերիալիստական ըմբռնումը հնարավոր էր միայն դիալեկտիկական իմացաբանության դիրքերից. իսկ դիալեկտիկա չիմանալու դեպքում դրանք անխուսափելիորեն սողանցք էին թողնում ագնոստիցիզմի և սուբյեկտիվ իդեալիզմի համար։ Մատերիալիզմի և իդեալիզմի դարավոր պայքարի գլխավոր թատերաբեմը դառնում էին իմացաբանական հարցերը։ Հատկանշական էր, որ մատերիալիզմի դեմ իդեալիզմը հանդես էր գալիս հակադիալեկտիկայի դիրքերից, այնինչ մատերիալիզմի հետևողական պաշտպանությունը և հետևողական զարգացումը պահանջում էին դիալեկտիկայի գիտակցված կիրառում բնագետների կողմից, մասնավորապես իմացաբանական հարցերի լուծում դիալեկտիկայի դիրքերից։

Որո՞նք էին ֆիզիկայի հայտնագործություններից բխող իմացաբանական հետևությունները և այն պատճառները, որ հանգեցրին այդ հետևությունների ագնոստիկական և սուբյեկտիվ իդեալիստական մեկնաբանության՝ «ֆիզիկական» իդեալիզմին։ Բացահայտելով այդ իմացաբանական հետևությունները և ցույց տալով «ֆիզիկական» իդեալիզմի իմացաբանական արմատները, Լենինը

[5] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 230։

զարգացրեց դիալեկտիկական մատերիալիզմն ընդհանրապես և նրա իմացաբանությունը՝ մասնավորապես։

* * *

«Մատերիան չքացավ» արտահայտությամբ Լենինը ընդհանրացնում է այն տիպականն ու հիմնականը, որը հատուկ էր ֆիզիկայի հայտնագործություններից արվող ագնոստիկական և սուբյեկտիվ-իդեալիստական բազմաթիվ մասնավոր հետևություններին։ Եվ իրոք, այդ հակիրճ և դիպուկ արտահայտությունը բովանդակում է ֆիզիկայի բոլոր դժվարությունները նորագույն հայտնագործությունների կապակցությամբ. էլեկտրոնի, էլեկտրամագնիսական դաշտի, ներատոմային պրոցեսների և այլ հայտնագործությունները, որոնք չէին համատեղվում մատերիային նախկինում վերագրվող հատկությունների հետ, դրանով իսկ մեկնաբանվում էին որպես մատերիայի հասկացության ժխտում, իսկ այդ իր հերթին հանգեցնում էր մատերիալիզմի հերքման գաղափարին։

Քննության առնելով այս հարցը, Լենինը ցույց է տալիս, որ մատերիային նախկինում վերագրվող հատկությունների ըմբռնման վերանայումը սոսկ նշանավորում է մատերիայի կառուցվածքի և ֆիզիկական հատկությունների մասին մեր գիտելիքների խորացում։ Բայց որքան էլ զարգանան, վերանայվեն և նույնիսկ հիմնովին փոխվեն մեր գիտելիքները մատերիայի կառուցվածքի մասին, դա չի կարող որևէ կերպ սասանել մատերիայի փիլիսոփայական հասկացությունը, «որովհետև մատերիայի սրան «հատկությունը», որի ճանաչման հետ կապված է փիլիսոփայական մատերիալիզմը, օբյեկտիվ ռեալություն լինելու, մեր գիտակցությունից դուրս գոյություն ունենալու հատկությունն է»[6]։

Բայց ինչո՞ւ մատերիայի նորանոր ձևերի ու հատկությունների հայտնաբերումը հանգեցնում էր հենց օբյեկտիվ ռեալություն լինելու գաղափարի ժխտմանը։ Դա պարզելու համար պետք է նկատի ունենալ հետևյալը։

Բնագետների մատերիալիզմը մինչև մեր դարասկիզբը միշտ խարսխված է եղել գլխավորապես սենսուալիզմի և էմպիրիզմի վրա։ Ահա թե ինչու մատերիալիստ բնագետի կարծիքով ոչ միայն մեր զգայությունների տվյալները, այլև մտածողական աշխատանքի արդյունքները՝ տեսությունները օբյեկտիվ աշխարհին համապատասխանում են անմիջականորեն՝ որպես հայելային արտապատկերներ։ Նույնիսկ այն ժամանակ, երբ հանդես եկավ և զարգացավ տեսական բնագիտությունը, մատերիալիստ բնագետները, ավելի կամ պակաս չափով, ձգտում էին զգայաբար պատկերել և իրականության մեջ անմիջականորեն գտնել այն, ինչ տեսության մեջ ձեռք էր բերված ընդհանրացման և աբստրահման միջոցով և արտահայտված էր աբստրակցիաների մեջ։ Այդ ձևով սենսուալիզմը և էմպիրիզմը կապվում էին մեխանիցիզմի հետ. հիշենք էլեկտրականությունը որպես հեղուկային հոսանք կամ կորպուսկուլների վազք պատկերող տեսությունը, եթերի մասին տումունքները և այլն, որոնք աբստրակցիաները սխեմատիկորեն և նյութական շոշափելի կերպով պատկերելու, վերացականը զգայական դարձնելու փորձերի մասին են խոսում։

Սակայն բնագիտության զարգացմանը զուգընթաց ավելի ու ավելի

---

[6] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 14, էջ 346—347։

դժվար էր դառնում տեսական մտածողության արդյունքների այդպիսի սխեմատիկ և զգայական պատկերումը։ Տեսական ընդհանրացումների և առհասարակ աբստրակցիաների օբյեկտիվ նշանակության ճիշտ ըմբռնումը պահանջում էր դիալեկտիկական մոտեցում, ամենից առաջ ընդհանուրի և մասնավորի, վերացականի և զգայականի փոխհարաբերության դիալեկտիկայի ըմբռնում, օբյեկտիվ աշխարհի նկատմամբ միջնորդավորված դիտելիքների հարաբերության ճիշտ ըմբռնում։ Բնագետներին դիալեկտիկան անծանոթ էր, նրանք խարխափելով էին գնում դեպի նրա ըմբռնումը և, բնականաբար, հանդիպում էին դժվարությունների։ Իդեալիզմը չհապաղեց այդ դժվարություններն օգտագործելուց, և քանի որ այդ դժվարություններն առաջացել էին բնագետների՝ դիալեկտիկա չիմանալու պատճառով, ապա և փդեալիզմը հանդես էր գալիս հակադիալեկտիկայի դիրքերից։

Նախորդ դարավերջին հատկապես զարգացավ պոզիտիվիզմի փիլիսոփայությունը։ Բնագետների շրջանում նրա լայն տարածման պատճառներից մեկն այն էր, որ նա հանդես էր գալիս սենսուալիզմի դիրքերից, բայց դա իդեալիստական սենսուալիզմ էր։ Պոզիտիվիզմը քարոզում էր հրաժարումն բնագիտության արդյունքների փիլիսոփայական ընդհանրացումներից։ Գիտության խնդիրն է, ըստ պոզիտիվիզմի, փաստերը և երևույթները նկարագրել այնպես, ինչպես դրանք տրված են մեր զգայարաններում, իսկ գիտական տեսությունը պոզիտիվիզմը համարում էր սոսկ հարմար կոնստրուկցիա, մտացածին սխեմա փաստերի կարգավորման և երևույթների բացատրության համար, ընդ որում այդ կոնստրուկցիան, այդ սխեման կարող է փոխարինվել նորով, եթե վերջինս ավելի լավ է բացատրում երևույթները։

Պոզիտիվիստական իդեալիզմի գնոսեոլոգիական արմատը նույնն է, ինչ և ամեն մի իդեալիզմինը. «Մարդու իմացության երկատումը և իդեալիզմի (= կրոնի) հնարավորությունը,— գրել է Լենինը,— տրված են արդեն առաջին. տարրական աբստրակցիայի մեջ...»[7]։ Եթե օբյեկտիվ իդեալիզմը աբստրակցիաները դնում է աշխարհի հիմքում՝ որպես առաջնային, քանի որ գրանցում մարմնավորված և արտահայտված են առարկաների ու երևույթների էությունը, աշխարհի զարգացման օրինաչափությունները, նրա «տրամաբանությունը», ապա սուբյեկտիվ իդեալիզմը, ելնելով էմպիրիկ-սենսուալիստական դիրքերից, առաջնային է համարում մարդու զգայությունները, մտապատկերները և անիմաստ ֆիկցիա ու երևակայության արդյունք է հայտարարում ընդհանուրը և վերացականը, քանի որ այդ վերջինները ոչ մի զգայական փորձի մեջ (որպես եզակի) տրված չեն։

Պոզիտիվիզմի այս իդեալիստական հայացքները զարգացան տեսական ֆիզիկայի զարգացման և բնագիտության հետ փիլիսոփայության կապի ուժեղացման պայմաններում՝ այն դժվարությունների ֆոնի վրա, որոնց ֆիզիկոսները և ընդհանրապես բնագետները հանդիպեցին օբյեկտիվ աշխարհի նկատմամբ տեսության ունեցած հարաբերության հարցի լուծման կապակցությամբ։ XX դարի սկզբի նորագույն հայտնագործությունների առնչությամբ բնագետների առջև ծառացան նոր դժվարություններ. մասնավորապես պարզվեց, որ նորահայտ միկրոաշխարհի շատ երևույթների էության, նրանց օրինաչափ

[7] Վ. Ի. Լենին, Փիլիսոփայական տետրեր, Պետրադրատ, 1947, էջ 308 (ռուս. հրատ.)։

կարգի և կապի արտահայտության միակ հնարավոր ձևը մաթեմատիկական հավասարումներն են. տեսական ֆիզիկան սկսեց վերածվել մաթեմատիկական ֆիզիկայի։ Քանի որ մաթեմատիկայի յուրահատուկ լեզվով արտահայտված աբստրակցիաները սխեմատիզացիայի հնարավորություն չէին ընձեռում (անբավարար էին ստացվում ատոմի կառուցվածքի ու բնույթի, էլեկտրամագնիսական դաշտի զգայական մոդելավորման փորձերը), ապա և մեխանիստական-սենսուալիստական մոտեցումը բնականաբար փլուզվում էր. սենսուալիզմի-մեխանիցիզմի տեսակետից ստացվում էր, որ մաթեմատիկական հավասարումներով ու բանաձևերով արտահայտված տեսությունը տոկ ֆիկցիա է, բայց այնպիսի ֆիկցիա, որը մեզ թույլ է տալիս բավարար բացատրություն տալու զգայական փորձի տվյալներին։ Այսպիսով ֆիկցիա էին դառնում մեր զգայարաններից դուրս գտնվող օբյեկտիվ ռեալության՝ մատերիայի մասին մեր բոլոր գիտելիքները, որոնք անհրաժեշտաբար ձևոք էին բերված տեսական մտածողության միջոցով և արտահայտված էին աբստրակցիաների, տվյալ դեպքում մաթեմատիկական աբստրակցիաների մեջ։ Այս էր ֆիզիկայի մեջ իդեալիզմի գնոսեոլոգիական առաջին արմատը, որի փիլիսոփայական արտահայտությունը եղավ էմպիրիոկրիտիցիզմը։ «Ռեակցիոն ոտնձգությունները ծնունդ են առնում գիտության բուն պրոգրեսից,— գրում է Լենինը։ — Բնագիտության խոշոր հաջողությունը, մոտեցումը մատերիայի այնպիսի համասեռ և հասարակ տարրերին, որոնց շարժման օրենքները թույլ են տալիս կատարել մաթեմատիկական մշակում, առաջացնում են այն, որ մաթեմատիկոսները մոռանում են մատերիան։ «Մատերիան չքանում է», մնում են սոսկ հավասարումները։ Զարգացման նոր ստադիայի վրա և իբր թե նոր ձևով ստացվում է կանտական հին իդեան. բանականությունն օրենքներ է հրահանգում բնությանը»[8]։

Այդ նույն պատճառով՝ տեսության, ընդհանրապես աբստրակցիաների և մասնավորապես մաթեմատիկական աբստրակցիաների դերի և էության թյուր ըմբռնման հետևանքով և իդեալիստական փիլիսոփայության ակնհայտ ազդեցության ներքո նույն գաղափարներն արտահայտվել են նաև հետագայում՝ Արևմուտքի նույնիսկ ամենախոշոր բնագետների կողմից։ Այդ գաղափարներից զերծ չէր Էյնշտեյնը, մինչև վերջերս դրանք արտահայտում էր Սիլս Բորը, դրանք ուղղակիորեն քարոզում էր Հայզենբերգը։ Այսպես, վերջինս գրել է. «Ժամանակակից ֆիզիկայում ատոմները կորցնում են նաև այդ վերջին հատկությունը (տարածականությունը — Հ. Ղ.), դրանք երկրաչափական հատկություններով օժտված են ոչ ավելի, քան մնացած հատկություններով՝ գույնով, համով և այլն։ Ժամանակակից ֆիզիկայի ատոմը կարող է սոսկ սիմվոլիկ ձևով ներկայացվել մասնակի ածանցյալներ ունեցող դիֆերենցիալ հավասարումներով՝ աբստրակտ բազմաչափանի տարածության մեջ...»[9]։

Բնագիտության փիլիսոփայության մեջ ներկայումս որոշակի տեղ է գրավում օպերացիոնալիզմը, որի հիմնադիրը և կարկառուն ներկայացուցիչը Ֆիզիկոս Բրիջմանն է։ Դա ըստ էության նույն էմպիրիկ-իդեալիստական՝ պոզիտիվիստական դպրոցի մի տարբերակն է։ Միակ ռեալությունը համարվում

[8] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 111—112։

[9] В. Гейзенберг, Философские проблемы атомной физики, М., 1953, стр. 32.

է երևույթների աշխարհը, իսկ գիտական հետազոտության մեջ՝ փորձի ժամանակ զանազան գործիքների, սարքերի ցուցմունքները՝ սլաքի թեքվելը, լուսային ազդանշանը, քիմիական ռեակցիայի մեջ մտնող նյութերի գունափոխությունը, ջերմաստիճանային փոփոխությունները և այլն, ընդ որում այդ ցուցմունքների օբյեկտիվ ռեալության հարցադրումն իսկ հայտարարվում է անիմաստ սպեկուլյացիա։ Ինչ վերաբերում է գիտական տեսությանը, ապա նրա գերը փորձից ստացված ցուցմունքների սոսկ կարգավորումն է, սիստեմավորումը և այնպիսի բացատրության առաջքաշումը, որը բավարարի այդ ցուցմունքներին։ Բնականաբար, այդպիսի մտային կոնստրուկցիան առհասարակ չի կարող օբյեկտիվ ռեալականության արտացոլումը հանդիսանալու հավակնություն ունենալ։

Այսպիսով, պոզիտիվիստական հին ու նոր դպրոցները, այդ թվում և՝ մախիզմը, և՝ նեոպոզիտիվիզմի զանազան տարբերակները, մետաֆիզիկական էմպիրիզմի դիրքերից ելնելով, զգայություններն անջրպետում են օբյեկտիվ աշխարհից, այնինչ զգայություններն այդ աշխարհի արտապատկերներն են, զգայություններում տրված երևույթներն անջրպետում են մտքով հասանելի էությունից, այնինչ էությունը, որպես ընդհանուր, տրված է իր բազմաթիվ դրսևորումների՝ երևույթների մեջ։ Դրանով բնագետների դիալեկտիկա չիմանալը և ռեակցիոն փիլիսոփաների հակադիալեկտիկան տանում են դեպի սուբյեկտիվ իդեալիզմ։

XX դարի փիլիսոփայական իդեալիզմի հակադիալեկտիկան մի առանձնահատկություն ունի, որը պայմանավորված է նրան ծնունդ տված հանգամանքներով՝ բնագիտության նորագույն հայտնագործությունների բնույթով։ Այդ հայտնագործությունները ցույց տվեցին մարդկային գիտելիքների հարաբերականությունը, ցույց տվեցին, որ հարատև շարժման մեջ գտնվող, հարափոփոխ բնությունը, երևույթների անսահմանորեն բարդ բազմազանությունը, որակական անցումները ճշմարիտ արտացոլելու համար մեր հասկացությունները ևս պետք է լինեն զարգացող, ճկուն, փոփոխական, իսկ այդ հասկացությունները գործածող գիտնականը պետք է ըմբռնի դրանց այդպիսի բնույթը, դրանց հարաբերականությունը։

«Ֆիզիկական» իդեալիզմին ծնունդ տված մյուս պատճառը ռելյատիվիզմի, մեր գիտելության հարաբերականության սկզբունքն է, մի սկզբունք, որն առանձին ուժով փաթաթվում է ֆիզիկոսների վզին հին թեորիաների խիստ բեկման շրջանում և որը, դիալեկտիկան չիմանալու պարագայում, անխուսափելիորեն տանում է դեպի իդեալիզմ»[10]։

Նախ, տեսնենք, թե ի՞նչ է նշանակում մեր գիտելիքների հարաբերականություն։

Աբստրակտ մտածողության օգնությամբ ձեռք բերված մեր գիտելիքները որոնք ամրագրվում են հասկացությունների, դատողությունների, մաթեմատիկական բանաձևերի, տեսությունների մեջ, իրականությանը համապատասխանում են ոչ բացարձակապես, ոչ լրիվ, այլ անուղղակի կերպով, մոտավոր կերպով, ինչպես Լենինն է ասում՝ իրենց տենդենցով։ Բացատրելով իրականությանը աբստրակցիաների համապատասխանության այս բնույթը, Էնգելսը նշում է երկու հանգամանք. իրականության մեջ յուրաքանչյուր օրինա-

[10] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 11, էջ 412։

չափության գործողությունը խաչաձևվում է ուրիշ օրինաչափությունների միաժամանակյա գործողության հետ և կրում է դրանց ազդեցությունը, ինչպես և օրինաչափության դրսևորման տվյալ, գուցե և անկրկնելի պայմանների ու մանրամասների ազդեցությունը, իսկ մտածողության մեջ, արտահայտվելով արստրակցիաների մեջ և նրանց միջոցով, այն մաքրվում է այդ կողմնակի ազդեցություններից, տվյալ արստրակցիայի ստեղծման համար երկրորդական հանգամանքներից։ Հենց այդ բանի շնորհիվ էլ գիտության ճանաչած յուրաքանչյուր օրենք համապատասխան պայմանների առկայության դեպքում կրկնվում է՝ որպես ընդհանրական։ Մյուս կողմից, յուրաքանչյուր արստրակցիա իրականությանը համապատասխանում է մոտավոր կերպով՝ հարաբերական է աշխարհի երևույթների էության մեջ թափանցելու խորությամբ, էության արտացոլման ճշգրտությամբ, իր կիրառության սահմաններով։ Այսպես, նյութերի ագրեգատային վիճակի հասկացության բովանդակությունը գիտության զարգացմանը զուգընթաց ոչ միայն հարստացել է նոր կողմերի ու հատկությունների իմացությամբ, այլև այդ հասկացության կիրառության ոլորտի ճշգրտմամբ։ Ամեն մի նյութի ագրեգատային վիճակը կախված է որոշ ջերմաստիճանի, ճնշման և այլ պայմանների հետ։ Նույնը վերաբերում է ամեն մի արստրակցիայի՝ լինի դա առանձին հասկացություն, թե մի ամբողջ տեսություն։ Նույնը կատարվեց նաև բնագիտության նորագույն հայտնագործությունների կապակցությամբ, որոնք ցույց տվեցին նախկին գիտելիքների սահմանափակությունը մատերիայի գոյության ու շարժման որոշակի ձևերով և այդ ձևերից դուրս (միկրոաշխարհի նկատմամբ) դրանք կիրառելու անհնարինությունը։

Այսպիսով, արստրակտ մտածողությամբ ձեռք բերված գիտելիքների համապատասխանությունը իրականությանը հարաբերական է։ Այդ հարաբերականությունը օբյեկտիվ աշխարհի ճշմարիտ արտացոլման պայմաններից մեկն է՝ զարգացող աշխարհը զարգացող մտքով արտացոլելու պայմաններից մեկը։ Ահա թե ինչու Էնգելսը գրել է, որ «այն օրը, երբ հասկացությունն ու իրականությունը... բացարձակապես կհամընկնեն, կհասնի զարգացման վախճանը»։

Մեր գիտելիքների հարաբերականությունը, որպես օբյեկտիվ երևույթ, չի կարող չընդունվել և ընդունվում է դիալեկտիկական իմացաբանության կողմից։ Դիալեկտիկան իր մեջ պարունակում է ռելյատիվիզմի մոմենտ, ասում է Լենինը և ավելացնում՝ բայց չի հանգում ռելյատիվիզմին։ Իմացության մեջ հարաբերականության մոմենտը, ինչպես և ամեն մի այլ մոմենտ, չբացարձականացնելը բխում է հենց դիալեկտիկայի էությունից. այլապես դիալեկտիկան կփոխարկվեր իր հակադրության։ Ըստ դիալեկտիկայի, մեր գիտելիքների հարաբերականությունը մեր իմացության միայն մի կողմն է արտահայտում, իսկ մյուս կողմը, մյուս մոմենտը մեր գիտելիքների մեջ բացարձակ ճշմարտության առկայությունն է։ Մեր այն գիտելիքները, որոնց օբյեկտիվ ճշմարտությունն լինելը հաստատված է պրակտիկայով, գիտության զարգացման համեմատ անփոփոխ չեն մնում կամ ամբողջովին դեն չեն նետվում. դրանք կարող են ճշգրտվել, փոփոխվել ու խորանալ, կարող են կոնկրետանալ բնության երևույթների անսահման բազմազանության որևէ կողմի նկատմամբ։ Դրանով իսկ հաջորդ ժամանակաշրջանի գիտելիքների մեջ կմտնի նախորդ գիտելիքների մեջ եղած բացարձակ ճշմարտության հատիկը, կմտնի կա՛մ առանձին

գիտելիքի ձևով, կա՛մ նոր ու հարուստ գիտելիքի ներսում՝ վերացարկված ձևով։

Մեր գիտելիքներին հատուկ՝ հարաբերական և բացարձակ ճշմարտության այս դիալեկտիկան միանգամից չըմբռնվեց բնագետների կողմից։ Կլասիկ ֆիզիկայի հասկացությունների փոփոխությունը, մատերիայի շարժման որոշ ձևերով սահմանափակված լինելու փաստի դրսևորումը, դրանց հարաբերականության դրսևորումը որոշ ֆիզիկոսների կողմից ընկալվեց որպես մեր գիտելիքների բացարձակ հարաբերականություն՝ ընդհանրապես և ամբողջովին։ Ժխտելով ֆիզիկայի նախորդ գիտելիքների մեջ բացարձակ ճշմարտության առկայությունը, նրանք դրանով իսկ ժխտեցին այդ գիտելիքների օբյեկտիվ ճշմարտություն լինելը և առհասարակ օբյեկտիվ ճշմարտության հասնելու հնարավորությունը։ Բացարձականացնելով իմացության հարաբերականության մոմենտը, նրանք այն հասցրին մարդկային հասկացությունների և տեսությունների մեջ օբյեկտիվ ռեալականության արտացոլման գաղափարի ժխտմանը։ Ավելին, ագնոստիկական այս հետևությունների ծայրահեղ արտահայտությունը եղավ ընդհանրապես մարդու զգայություններից անկախ օբյեկտիվ ռեալականության ժխտումը՝ սուբյեկտիվ իդեալիզմը։

Իմացության հարաբերականության մոմենտի բացարձականացումը ունենում է այն հետևանքը, որ գիտական բոլոր տեսությունները հայտարարվում են սոսկ հիպոթետիկ, սոսկ այնպիսի հավանականությամբ օժտված, որը չի կարող հավաստիության հասնել օբյեկտիվ ճշմարտությունն արտացոլելու իմաստով։ Բայց չէ՞ որ այս դեպքում կարող է լայն ասպարեզ բացվել կամայականության համար. տվյալ բնագավառի երևույթների բացատրության համար հավանական կարող են լինել մի քանի տեսություններ։ Այս դեպքում ո՞րն է այն չափանիշը, ըստ որի պետք է ընտրություն կատարվի այդ տեսությունների միջև։ Հարմարությունը և օգտավետությունը՝ ասում են պրագմատիստները. տրամաբանական հիմնավորվածությունը և անհրաժեշտությունը՝ ասում են կոնվենցիոնալիստները (Պուանկարե, Էդինգտոն) և տրամաբանական պոզիտիվիստները (Ռասել, Վիտգենշտայն, Կառնապ և այլն)։ Տվյալ դեպքում մեզ չեն հետաքրքրում նրանց կողմից բերվող փաստարկները և նրանց միջև եղած տարբերությունները, բայց բոլորի էությունը մնում է նույնը. գիտական տեսությունը տրամաբանորեն հիմնավորված մտային հարմար կոնստրուկցիա է զգայություններում տրված երևույթների բացատրության համար։

Դիալեկտիկական մատերիալիզմի դիրքերից ելնելու դեպքում ագնոստիկական և սուբյեկտիվ-իդեալիստական այդ բոլոր հետևությունների շենքը փլուզվում է։ Նախ, պարզվում է ընդհանրապես մատերիալիզմի հերքման մասին պնդման ողջ սնանկությունը։ «Մատերիալիզմն ու իդեալիզմը,—գրել է Լենինը,— տարբերվում են մեր իմացության աղբյուրի հարցի, իմացության (և առհասարակ «հոգեկանի») ու ֆիզիկական աշխարհի հարաբերության հարցի այս կամ այն լուծմամբ, իսկ մատերիայի կազմության, ատոմների և էլեկտրոնների հարցը մի հարց է, որը վերաբերում է միայն այդ «ֆիզիկական աշխարհին»[11]։ Ուրեմն, մատերիայի մասին ֆիզիկական դիտելիքների փոփոխությունը և կուտակումը չի շոշափում իմացության աղբյուրի հարցը, օբյեկ-

[11] Նույն տեղում, էջ 345։

տիվ ճշմարտության գոյության հարցը, այն շոշափում է մեկ ուրիշ հարց՝ իմացության պրոցեսում հարաբերական և բացարձակ ճշմարտության փոխհարաբերության հարցը։ Շփոթելով այս երկու հարցերը և, կատարվող փոփոխությունների ազդեցության տակ, ժխտելով բացարձակ ճշմարտությունը, ֆիզիկոսների մի մասը դրանով իսկ հանգեց օբյեկտիվ ճշմարտության ժխտման։

Եթե բնագիտության նորագույն հայտնագործությունները չեն շոշափում մեր իմացության աղբյուրի հարցը. ապա և ընդհանրապես մատերիալիզմի հիմունքները չեն խարխլվում։ Բայց խարխլվում են մետաֆիզիկական և մեխանիստական աշխարհըմբռնողության հիմունքները, իսկ մատերիալիզմը անպայման կապված չէ այդպիսի աշխարհըմբռնողության հետ, որովհետև, ինչպես ասվեց, այն կապ տնի միայն իմացության աղբյուրի հարցի որոշակի լուծման հետ։ Մետաֆիզիկային և մեխանիցիզմին, գիտության զարգացման ներքին անհրաժեշտությամբ, փոխարինելու է գալիս դիալեկտիկան։ Բնագետներն ստիպված են դիալեկտիկան ընդունել և դիալեկտիկորեն մտածել, եթե նրանք ցանկանում են ճիշտ հասկանալ բնության երևույթները, բայց նրանք պետք է միաժամանակ մատերիալիզմի դիրքերում կանգնեն, եթե չեն ցանկանում հոգևոր սնունդ մատակարարել կրոնին և ֆիդեիզմին, դառնալ խավարամոլության դաշնակիցը ոչ միայն սոցիալական կյանքում, այլև գիտության ասպարեզում։

Դիալեկտիկական մատերիալիզմը, այսպիսով. դառնում է բնագիտության միակ փիլիսոփայական հիմքը։